ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

26 ապրիլի 2024 թվական

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու հերթական նիստին ներկա էին ավագանու թվով 12 անդամներ:

Նիստը վարում էր Բաղրամյան համայնքի ղեկավար՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի փոխարինող՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26 ԱՊՐԻԼԻ 2024Թ.ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. <u>ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ</u>

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 62–րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 26-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (11)Դեմ (0)Ձեռնպահ (1)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 36-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13–րդ հոդվածի 2-րդ մասով և 19-րդ հոդվածի 4-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Բաղրամյան համայնքի 2024 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (11)Դեմ (0)Ձեռնպահ (1)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 37-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ԱԼԱՎԵՐԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-ին հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի 2024-2027թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ /ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով/ կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեի ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլվում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (11)Դեմ (0)Ձեռնպահ (1)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 38-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՊԵՐՃ ՎԱՆԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 04-096-0004-0028

ԿԱԴԱՍՏԱՐՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՔԱՐԱԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29–ի N 1920–Ն որոշմամբ և հիմք ընդունելով Քարակերտ բնակավարի բնակիչ՝ Պերճ Վանիկի Խաչատրյանին դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Պերճ Խաչատրյանին սեփականությունը հանդիսացող,04-096-0004-0028 կադաստրային ծածկագրով 0,0212 հա (վկայական N29082016-04-0021 տրված 29 օգոստոսի 2016 թվական) գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք, որը ներառված է «Արմավիր-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում՝ 0,0212 հա նպատակային նշանակությունը փոփոխել, որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի:
2. Պերճ Խաչատրյանը համայնքի բյուջե պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքների փոփոխման պահին առկա տարբերությունը, որը կազմում է համապատասխանաբար 72000/ յոթանասուն երկու հազար/ ՀՀ դրամ,վճարման ժամկետ սահմանել որուշումը ընդունման պահից 30 օրվա ընթացքում:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքային հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (11)Դեմ (0)Ձեռնպահ (1)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 39-Ա)

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՎԵՆԵՐԱ ԳԵՎՈՐԳԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 04-091-0121-0008 ԿԱԴԱՍՏԱՐՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏԱԼՎՈՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29–ի N 1920–Ն որոշմամբ և հիմք ընդունելով Քարակերտ բնակավարի բնակիչ՝ Վեներա Գևորգի Հարութունյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վեներա Հարությունյանին սեփականությունը հանդիսացող,04-091-0121-0008 կադաստրային ծածկագրով 0,2994 հա (վկայական N02022024-04-0025 տրված 2 փետրվարի 2024 թվական) գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից՝ 0,0797հա-ն, որը ներառված է «Արմավիր-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման

փաստաթղթում նպատակային նշանակությունը փոփոխել՝ որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի:

2.Վեներա Հարությունյանը համայնքի բյուջե պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքների փոփոխման պահին առկա տարբերությունը, որը կազմում է համապատասխանաբար 174000/մեկ հարյուր յոթանասունչորս հազար/ ՀՀ դրամ,վճարման ժամկետ սահմանել որուշումը ընդունման պահից 30 օրվա ընթացքում:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքային հողային հաշվեկշռում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Կողմ (11)Դեմ (0)Ձեռնպահ (1)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 40-Ա)

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴԱԼԱՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ <<ԹՈՒՄՈ>> ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. <u>ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ</u>

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N286 որոշման պահանջները և Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն հիմնելու և կրթական ծրագրի գործունեության իրականացման նպատակով հողատարածք տրամադրելու մասին.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի սեփականություն հանդիսացող Դալարիկ բնակավայրում գտնվող 04-036-0023-0144 կադաստրային ծածկագրով, Հ.Բաղրամյան փողոց 20/1հասցեում գտնվող 0,072հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածքը (այսուհետ՝գույք), անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել «Թումո»ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնին՝ կրթական ծրագրի իրականացման նպատակով:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (11)Դեմ (0)Ձեռնպահ (1)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 41-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՄՀԵՐ ՀԱՐԹԵՆՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով
և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 19-ի թիվ 02 եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի 2024 թվականի բյուջեի միջոցներից օգնություն հատկացնել սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (11)Դեմ (0)Ձեռնպահ (1)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 42-Ա)

ԼՍԵՑԻՆ

<<ԳԳՎ>> ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. ՄԽԻԹԱՐ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, ,Քաղաքաշինության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 143.-րդ հոդվածի պահանջներով, ,Հողային օրենսգրքիե 7-րդ հոդվածի 8-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի մարտի 30-ի N 27 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը .

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ <<ԳԳՎ>>ՍՊԸ-ԻՆ սեփականության իրավունքով պատկանող, 04-080-0102-0314 կադաստրային ծածկագրով 10 հա արոտավայրը և 04-080-0102-0546 կադաստրային ծածկագրով 7,9153 հա այլ հողատեսքը փոխադրել էներգետիկայի,կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակության:

2. <<ԳԳՎ >>ՍՊԸ-ն համայնքի բյուջե պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքների փոփոխման պահին առկա տարբերությունը, որը 10,0հա հողատարածքի համար՝ 33,660,000 /երեսուներեք միլիոն վեց հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ, 7,9153 հա հողատարածքի համար՝ 26,643,000 /քսանվեց միլիոն վեց հարյուր քառասուներեք հազար / ՀՀ դրամ,ընդհանուր գումարը՝ 60,303,000/ վաթսուն միլիոն երեք հարյուր երեք հազար/ ՀՀ դրամ:
3. Վճարման ժամկետ սահմանել որուշումը ընդունման պահից՝ 30 օրվա ընթացքում:
4. 17,9153 հա հողամասի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման, որը անհրաժեշտ է արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (11)Դեմ (0)Ձեռնպահ (1)

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է. (կցվում է որոշում N 43-Ա)

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ
3. ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ
5. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ
6. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
7. ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
9. ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ
10. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՈՒԹ
11. ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ
12. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ